

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Պարտադիր ժամկետային զինծառայող Վալերիկ Ազատի Մուրադյանի մահվան հանգամանքների և դրանց քննության վերաբերյալ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ ԱԶԱՏԻ

Զորակոչվել է 2009թ. նոյեմբերի 25-ին Արմավիրի զինկոմիսարիատից
Ծառայության է անցել ԼՂՀ ՊԲ թիվ 39138 զորամաս /Սյրեփանակերտ/

1. Մահվան պատճառների պաշտոնական վարկածը.

2010թ. մարտի 15-ին ժամը 00:35-ի սահմաններում ՊԲ թիվ 39138 զորամասի վերանորոգման վաշտի սպայական սենյակի հետնամասում պարանի միջոցով երկաթե ձողից կախված վիճակում հայտնաբերվել է նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Վալերիկ Ազատի Մուրադյանի դիակը:

Փաստի առթիվ ՀՀ ՊՆ քննչական ծառայության բաժնում ՀՀ քր. օր-ի 110 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործ (*Ինքնասպանության հասցնելը*): Նախաքննության ընթացքում ձեռք բերված ապացույցների հիման վրա նախաքննության մարմնի կողմից կայացվել էր որոշում՝ քրեական գործի նախաքննությունը կասեցնելու մասին:

2. Մահվան պատճառների դիմումատուի վարկածը.

Ըստ Վալերիկ Մուրադյանի մոր՝ Նանա Մուրադյանի, իր տղային նախ խեղդել են, այնուհետև նշված վայրում կախել: Դիմումատուի պնդմամբ, դեպքից 4 օր առաջ ինքը հեռախոսով զրուցել է որդու հետ, որը տեղեկացրել է, թե ինքը ականատես է եղել զորամասի տարածքից մեկ սպայի և մի քանի ծառայակիցների կողմից վառելիքի գողության դեպքին: Վալերիկ Մուրադյանը ծնողներին տեղեկացրել է նաև, որ վառելիքի գողության մասին որևէ մեկին չհայտնելու համար իրեն 3000 դրամ գումար են առաջարկել: Կարծում է, որ իր որդու մահվան հիմնական պատճառը կապված է այդ դեպքի հետ:

Ինքնասպանության փաստը բացառելով, դիմումատուն գտնում է, որ կատարվել է դիտավորյալ սպանություն:

3. Գործի քննությունը ներկայումս հետևյալ փուլում է.

2011թ. հունվարին ՀՀ զինվորական դատախազի ցուցումով սույն քրեական գործի կասեցումը վերացվել է ու հանձնարարվել է ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը լրացուցիչ նախաքննություն իրականացնելու համար: Ներկայումս քրեական գործի նախաքննությունը շարունակվում է:

Քրեական գործի նախաքննության վերսկսումից հետո կալանավորվել էր պայմանագրային զինծառայող Արմեն Գրիգորյանը, որը մեղադրվել է դեպքից մոտ մեկ ամիս առաջ Վալերիկ Մուրադյանին ապտակելու և նվաստացնելու համար: Ըստ դիմումատուի, Ա. Գրիգորյանը

նի նկատմամբ հետագայում քրեական հետապնդումը դադարեցվել է ՀՀ ԱԺ համաներման մասին որոշման հիման վրա:

4. Գործի քննության /հետաքննության, նախաքննության, դատաքննության և այլն/ ընթացքում տեղ գտած թերացումները, ըստ դիմումատուի.

- Սույն քրեական գործով նախկին քննիչ Արման Ապրեսյանը պատշաճ կարգով փորձաքննություններ չի նշանակել, իսկ առկա փորձաքննություններում եղած հակասությունները վերացնելու ուղղությամբ կոնկրետ քայլեր չի ձեռնարկել,
- դատաբժշկական եզրակացության մեջ առկա են հակասական հետևություններ,
- նախաքննության ընթացքում հանգուցյալի հագուստը փորձաքննության չի ուղարկվել,
- այն պարանոց, որով կախվել է Վալերիկ Մուրադյանը, առկա են եղել արյան հետքեր, որը պետք է ուղարկվեր փորձաքննության արյան կարգը որոշելու, ինչպես նաև պատկանելիությունը որոշելու համար, սակայն չի կատարվել,
- դեպքի վայրում հայտնաբերվել է այլ զինձառայողի գոտին, ձմեռային զինվորական բաճկոնը, որոնց նախաքննության մարմինը չի անդրադարձել,
- չնայած երեկոյան անվանականչին Վալերիկ Մուրադյանը ներկա չի եղել, սակայն անվանականչի մատյանում իր անվան դիմաց գրված է եղել <<ներկա>> գրառումը,
- քննիչի կողմից սպանության վարկածով պատշաճ քննություն չի իրականացվել:

5. Դիմումատուի առաջարկները քննության բավարար արդյունքներ ստանալու համար.

- Դեպքը որպես ինքնասպանություն դիտելու փոխարեն արարքը վերաորակել որպես դիտավորյալ սպանություն,
- քրեական գործն ամբողջովին բացահայտելու համար հարցաքննության կանչել և հարցաքննել տվյալ օրվա վաշտի հերթապահ սպային և համաձառայակից վկաներին,
- պատճառաբանել և հիմնավորել, թե ինչու են դեպքի վայրում եղել մյուս զինձառայողների գոտին ու հագուստը,
- ինչու է զինձառայող Ավետիք Խաչատրյանը վերցրել հանգուցյալի ձմեռային բաճկոնը /ըստ դիմումատուի, լինելով դեպքի վայրում, Ա. Խաչատրյանը շփոթված է իր բաճկոնի փոխարեն Վալերիկի բաճկոնը հագել/,
- նշանակել փորձաքննություն պարանի վրա եղած արյան հետքերի պատկանելիությունը որոշելու համար, քանի որ, դիմումատուի պնդմամբ, այդ արյան հետքը եղել է սպանության մասնակիցներից մեկինը:

6. Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկները ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներին

Հարցապնդմամբ դիմել ՀՀ զինվորական դատախազին՝ դեպքին ականատես բոլոր հնարավոր վկաներին հարցաքննելու, քննությամբ չպարզված որոշ հանգամանքները պարզելու նպա-


տակով, ինչպես նաև ստանալ տեղեկատվություն սույն տեղեկանքի 4-րդ կետում դիմումատուի կողմից բարձրացված հարցերի վերաբերյալ:

Հարցապնդմամբ դիմել ՀՀ ՊՆ քննչական ծառայությանը՝ արարքը որպես դիտավորյալ սպանություն վերաորակելու համար:

Հարցում ուղարկել ՀՀ ՊՆ Ռազմական ոստիկանության վարչության պետին՝ զորամասում օպերատիվ հետախուզական աշխատանքները ակտիվացնելու, ինչպես նաև դեպքին առնչվող բոլոր հանգամանքները բացահայտելու նպատակով:

Ծանոթագրություն: *Սույն տեղեկանքում ներկայացված վարկածները, ենթադրությունները, եզրակացությունները, պնդումներն ու առաջարկությունները, բացառությամբ սույն տեղեկանքի 6-րդ կետում ներկայացվածների, չեն կարող որևէ դեպքում ներկայացվել որպես ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գնահատականներ կամ դիրքորոշումներ:*

ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ՝
ԿԱՐԵՆ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ



ԴԻՄՈՒՄԱՏՈՒ՝
ՆԱՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ
(Վալերիկ Մուրադյանի մայրը)

